**Արձանագրություն N 3**
**ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի**

ք.Երևան 24 դեկտեմբերի 2021թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Շ. Վարդանյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Գ. Բոյախչյան |
| | Շ. Աբելյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ա. Խաչատրյան |
| | Թ. Խաչատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | |
| | Ս. Բադալյան |

<u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>

1. Գնման հայտերում առկա փաստաթղթերի թերությունների շտկման արձանագրում,
2. Բանակցությունների կազմակերպման նպատակով նիստի կասեցում և մասնակիցներին այդ մասին ծանուցում,
3. Հանձնաժողվի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի սահմանում:

**1. Գնման հայտերում առկա փաստաթղթերի թերությունների շտկման արձանագրում**

<u>Հանձնաժողովը արձանագրեց</u>, որ

1.1 «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունների գծով Ընկերությունից ստացվել են շտկումներ ենթադրող փաստաթղթերը, որոնք ուսումնասիրելուց հետո Գնահատող հանձնաժողովի N 2 արձանագրության 2.2 կետում առկա թերություններից 3-րդ և 4-րդ կետերը համարվում են շտկված: 2-րդ կետի մասով ընկերությունից ստացված փաստաթղթերը ապացուցում են ընկերության անդամակցությունը Բեյքեր Թիլլի Ինթերնեյշնլ կազմակերպությանը որպես անդամ, սակայն չի ստացվել որևէ փաստաթուղթ, որը կապացուցեր Բեյթեր Թիլլի Ինթերնեյշնլ կազմակերպության մասնակցությունը ընկերության կանոնադրական կապիտալում կամ հայաստանյան մասնաճյուղ/ներկայացուցչություն լինելը, ուստի այս կետով ներկայացված փաստաթղթերը համարվում են անբավարար: Ինչ վերաբերում է 1-ին կետին, ապա ընկերության կողմից ներկայացվել է դատարանի կողմից կայացված որոշում, որով կիրառվել է հայցի ապահովման միջոց. այն է՝ «...պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը...», մինչդեռ դատարանը չի բավարարել ընկերության կողմից միջնորդվող մեկ այլ ապահովման միջոցը, այն է՝ «...արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը կատարել այնպիսի գործողություններ կամ ընդունել լիցենզիայի հետ կանչման վերաբերյալ վարչական ակտեր, որոնք կսահմանափակեն կամ կարող են սահմանափակել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունքները և/կամ օրինական շահերը...»:
Այսպիսով, հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետի պահանջը առ այն, որ Ընկերությունը պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում, չի բավարարվել, ինչն էլ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն նշանակում է, որ այս պահին

Ընկերությունը չունի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք: Հանձնաժողովը որոշեց, վերը նշված հիմքով մերժել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին (ինչպես նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին):

1.2 «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները (հրավերի Հավելված 1.3-ով չեն ներկայացվել յուրաքանչյուր աշխատակցի որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները) շտկվել են:

**2. Բանակցությունների կազմակերպման նպատակով նիստի կասեցում և մասնակիցներին այդ մասին ծանուցում**

**2.1 Հանձնաժողովը որոշեց** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմաններին բավարարող «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների անցկացման համար նիստ հրավիրել ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում, 2021 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին, բանակցությունների վարման համար սահմանել 40 րոպե ժամանակ:

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի սահմանում**

**3.1 Հանձնաժողովը որոշեց** «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի բանակցությունների անցկացման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին ք. Երևան, Ա. Մանուկյան 5 հասցեում:

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Շ. Վարդանյան |
| գնահատող անդամներ՝ | Գ. Բոյախչյան |
| | Շ. Աբելյան |
| բացող անդամներ՝ | Թ. Խաչատրյան |
| | Ա. Խաչատրյան |
| քարտուղար՝ | Ս.Բադալյան |

# Протокол № 3

## заседания оценочной комиссии процедуры закупки по электронной системе закупок (ARMEPS) с кодом HHXA-GHTsDzB-01/22

г. Ереван

24 декабря 2021г.
Время: 10:00

Участвовали:

| | |
|---|---|
| Председатель комиссии: | Ш. Варданян |
| Оценивающие члены комиссии: | Г. Бояхчян |
| | Ш.Абелян |
| Открывающие члены комиссии: | А. Хачатрян |
| | Т. Хачатрян |
| Секретарь комиссии: | С. Бадалян |

**Повестка заседания комиссии**

1. Подтверждение факта устранения недостатков в документах, имеющихся в заявках на закупку,
2. Приостановление заседания в целях организации переговоров и уведомление об этом участников,
3. Определение даты, времени и места проведения следующего заседания комиссии.

**1. Подтверждение факта устранения недостатков в документах, имеющихся в заявках на закупку**

Комиссия отметила, что:

1.1 В отношении недостатков в документах, представленных ЗАО «Бейкер Тилли Армения»,

Компания предоставила документы, предполагающие исправления, рассмотрев которые подпункты 3 и 4 пункта 2.2 Протокола № 2 Оценочной комиссии считаются исправленными. В отношении пункта 2, документы полученные от компании подтверждают, что компания является членом Baker Tilly International, но не было получено никаких доказательств, подтверждающих участие Baker Tilly International в уставном капитале компании или подтвеждение того, что компания является армянским филиалом/представительством последнего, поэтому документы, представленные по данному пункту считаются недостаточными. В отношении пункта 1 компания предоставила решение суда, согласно которому была применена следующая мера обеспечения иска: "...для компании ЗАО "Бейкер Тилли Армения" сохранить статус лица, имеющего лицензию на осуществление аудиторской деятельности", в то время как суд не удовлетворил другую меру обеспечения иска по ходатайству компании, в частности: " ... запретить Министерству финансов РА совершать такие действия или принимать административные акты об отзыве лицензии, которые ограничат или могут ограничить права на осуществление аудиторской деятельности и/или законные интересы ЗАО "Бейкер Тилли Армения" ...". Таким образом, требование пункта 1 технического описания-графика закупок, определенного в Приложении 6 приглашения, о включении Компании в реестр, который ведет аккредитованная Мин.финансов РА специализированная структура ОО "Палата аудиторов и экспертных бухгалтеров Армении", не удовлетворено, что в соответствии с 1-ым пунктом 6-ой статьи Закона РА "Об аудиторской деятельности" означает, что в настоящее время Компания не имеет права оказывать аудиторские услуги.

На основании вышеуказанного, Комиссия решила отклонить поданную ЗАО "Бейкер Тилли Армения" заявку, так как заявка не соответствует требованиям приглашения (а также требованиям Закона РА "Об аудиторской деятельности").

1.2 Недостатки в документах, представленных ЗАО «БИ-ДИ-О АРМЕНИЯ» (в Приложении 1.3 приглашения не были представлены копии документов, подтверждающих квалификацию каждого сотрудника) были исправлены.

2. Приостановление заседания в целях организации переговоров и уведомление об этом участников

2.1 Комиссия решила согласно 5-му подпункту 40-го пункта Порядка организации процесса закупок, утвержденного Постановлением Правительства РА № 526-Ն от 04.05.2017 г., с целью определения победителя для 1-ого, 2-ого и 3-его лотов приостановить заседание, и с целью снижения предложенной цены, ЗАО «БИ-ДИ-О АРМЕНИЯ», каторый имеет удовлетворительную оценку неценовых критерий, пригласить на одновременные переговоры. Для проведения переговоров созвать заседание по адресу: г. Ереван, А. Манукяна 5, 29.12.2021г. в 12:00 часов и установить продолжительность переговоров 40 минут.

3. Определение даты, времени и места проведения следующего аседания комиссии

3.1 Комиссия решила с целью проведения переговоров созвать заседание оценочной комиссии процедуры закупки по электронной системе закупок (ARMEPS) с кодом ННХА-GHTsDzB-01/22 29-ого декабря 2021 года в 12:00 часов по адресу г. Ереван, А. Манукяна 5.

Председатель комиссии: Ш. Варданян

Оценивающие члены комиссии: Г. Бояхчян

Ш.Абелян

Открывающие члены комиссии: А. Хачатрян

Т. Хачатрян

Секретарь комиссии: С. Бадалян